



**ՀՀ Սփիւռքի Նախարարություն
Հրանոյշ Յակոբեան-նախարար**

03/03/11

Միրելի Տիկ.Յակոբեան,

Մեծ գոհուակութեամբ կու գենք ձեզի տեղեկացնել թէ նախարարութեան միջոցաւ ստացած ենք բովանդակալից գրքերու ստուար ծրար մը և այլ արարկաներ, որոնց համար մեր սրտագին շնորհակալութիւնը կը յայտնենք:

Հաստատօրէն կրնանք ըսել որ այդ գրքերը պիտի օգտագործենք մեր առօրեայ ձայնասփռումներու ընթացքին, բաժիններ ներկայացնելով մեր բազմահազար ունկնդիրներուն: Ինչ կը վերաբերի մեր սքանչելի Ոսկեղնիկին, ան արդէն տեղ գտած է մեր գրասենեակի պատերէն մէկուն վրայ, Պետական զինանշանի հետ միասին:

Յաջողութիւն կը մաղթենք ձեր աշխատանքներուն: Նման առաքումներ և նիւթեր, հողագուրկ մեր ոտքերուն տակ, մեզի աւելի կը զօրացնեն, քիչ մը եւս տոկալու, իբրեւ հայեր, կլանող այս ափերուն վրայ:

Կրկին մեր շնորհակալութիւնները և յուսով որ մօտօրէն դարձեալ հանդիպելու առիթ ստեղծուի:

Ջերմագին բարեւներով

Կարօ Հէքիմեան

Կոմիտաս Ռատիօժամի տնօրէն